Պարույր Սևակ

Վերհուշ

Կրկին անձրևն է տեղում գիշերային մայթերին,
Քնա՜ծ, խաղա՜ղ քաղաքի տանիքներին երազկոտ:
Եվ արթնանում է կրկին մի հին երազ մտերիմ,-
Ու ես մեր գյուղն եմ ընկնում սովորական հրաշքով:
Այնտեղ ննջում է հիմա տարափի տակ այս վարար
Մի կավաշեն, հողհատակ ու հարդածածկ լուռ խրճիթ:
Հանգել է լույսը լամպի, իջել գիշերը խավար,
Քնել է մայրն իմ պառավ՝ կրողը մեր տան խղճի:
...Ես մի երազ ունեի պատանության օրերում,
Երբ արթնացել էր հոգիս սիրո նորեկ հովերից.
Այդ հողաշեն ծածկի տակ, հարսանեկան շորերում
Տեսնել նրա՛ն, ում համար ես կանցնեի ծովերի՜ց,
Տեսնել նրա՛ն, ում համար շուռ կտայի ես սարե՜ր...
Ա՛խ, ի՞նչ ծովեր, ի՞նչ սարեր,- միայն ասում են այդպես...
Տեսնել նրա՛ն, ում համար, փեշըս լցրած խիճքարեր՝
Ես մեր այգու ծառերին տանջում էի պարզապես.
Ամեն նետված քարիս հետ թե մի խնձոր չընկներ ցած,
Ուրեմն իզո՜ւր,- վա՛տ նշան,- ես չեմ հասնի մուրազիս...
Խնձորն ընկներ թե չընկներ՝ ցնծագին կամ դառնացած,
Քարերն էի ես թողնում ու հետևում երազիս.
-Կապրենք մեկտեղ, բախտավոր: Դաշտից ես տուն կդառնամ

Արդեն հոգնած ու դադրած, բայց վաստակած, ինքնագոհ:
Մայրս, կովկիթը ձեռքին, տուն կմտնի, մինչդեռ Նա
Սուփրեն գետնին բացելիս ինձ կժպտա գողեգող
Մինչ հավաքի Նա սուփրեն՝ սարին, ձորին ու հանդին
Իրիկունը կիջնի ցած, ու ես մի կողմ կնետեմ
Իմ մանգաղը հեսանվող կամ իմ սրվող գերանդին,-
Հո չպիտի մթան մեջ իմ մատները կտրատեմ...
Խոտի դեզը տանիքից, բակից այգին կբուրի,
Ու ծղրիդի երգի տակ, նվագի տակ այդ վարպետ,
Ծածկված նախշուն վերմակով՝ քուն կմտնենք կտուրին,
Իսկ կողքներիս՝ մի ջեջիմ կամ հնամաշ մի կարպետ,
Որ թե, ինչպես այս պահին, տեղա անձրև անհատնում,
Ծածկվենք նաև շերտավոր մեր կարպետով այդ բրդե:
...Եվ անձրևի թակոցից խոր քնից ենք մենք զարթնում
Եվ, մինչ երկինքը պարզվի, (այդ պատճառով իբր թե),
Էլ չենք քնում՝ զրուցում, երազում ենք շշուկով,
Առատ հնձից ենք խոսում, մրգահասից մեր այգու,
Եվ ա՛յն մասին, թե արդյոք պիտի գնել ե՞զ, թե կով,
Եվ ա՛յն մասին, որ պիտի մորքս առնել վերարկու...
*
Ձիգ տարիներ են անցել...
Կրկին անձրևն է երգում,
Սակայն արդեն քաղաքի գիշերային մայթերին:
Երգո՞ւմ է նա, ո՛չ, կարծես հին երազն է մորմոքում,
Հին երազը՝ նորացած, բայց և նույնքան մտերիմ:
Փոխվել է ո՛ղջը հիմա - և՛ դեմքերը գյուղակի,
Ե՛վ դեպքերը, որոնք ինձ օրերի խենթ վազքի հետ
Գյուղից քաղաք նետեցին ու քաղաքներ՝ քաղաքից,-
Ողջը փոխվել է հիմա, փոխվել ընդմի՛շտ, առհավե՛տ:
Նույնն է երա՛զը միայն, որ մնացել է հրկեզ.

-Լոկ ունենալ կավաշեն ու հարդածածկ մի խրճիթ
Եվ այդ համեստ ծածկի տակ ունենալ քե՛զ, միայն քե՛զ՝
Իբրև բերքի խոստումի,
մրգահասի
ու խղճի...

25.VIII.1948թ. 19-20.X.1955թ.
Երևան Մոսկվա